

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հարաւայիմ Ամերիկայի մէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիմ վարչական իմաստով թեւ երեք թեմերու բաժնուած է (Պրագիլ, Արժամթիմ եւ Ուրուկուայ) սակայն կը մերկայացմէ մէկ ամբողջութիւն մը: Այս իմաստով եւ համոզումով Հոկտեմբերի 21, 22 եւ 23-իմ Հարաւի վերոյիշեալ երկիրներու Առաջնորդները (Տաթեւ Եպս. Ղարիպեան, Գիսակ Եպս. Մուրատեան եւ Յակոբ Եպս. Գլըմեան) համդիպում-ժողովներ ունեցան Արժամթիմի մայրաքաղաք՝ Պուէնոս Այրեսի մէջ, մպատակ ունեցալով համագործակցութիւնն ու երեք թեմերն ալ յուզող մոյմատեսակ դժուարութեանց համատեղ դիմագրաւումը:

Ժողովներու ընթացքիմ քմնուեցան առաջնահերթ եւ երկրորդական հարցեր եւ առնուեցան հետեւեալ որոշումները.-

Ա.- Հերթական կերպով շարունակել եպիսկոպոսներու համդիպումները եւ ջամալ կազմակերպել Հարաւայիմ Ամերիկայի հոգեւորականաց տարեկան համագումարներ:

Բ.- Երեք Առաջնորդներու ստորագրութեամբ եւ յամու Հարաւայիմ Ամերիկայի թեմերում, ղրկուեցաւ շնորհաւորական մամակ մը Հայաստանի Համրապետութեան մորըմտիք Նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեանիմ:

Գ.- Բնմուեցաւ՝ Մոմթէվիտոյի մէջ Հոռմէադաւան Հայ Կաթողիկէ մեր եղբայրներում կողմէ հրատարակուած "Պուէթիմ" պաշտօնաթերթիկի թիւ 38-ը: Մասմաւոր հաղորդագրութեամբ մը ցաւ յայտնուեցաւ, որ տակաւիմ կը շարունակուի ժամանակավրէպ հարցերով շփոթ ստեղծելու եւ մարդորսութիւն կատարելու ամիսիմ քաղաքականութիւնը:

Դ.- Պատրաստուեցաւ մասմաւոր մամակ մը ուղղուած "Էլ Բրոմիսթա"՝ Պուէնոս Այրես հրատարակուող օրաթերթիմ, եշ. 17 Հոկտեմբերի թիւիմ մէջ լոյս տեսած "Սփիւռք թիկունք չի կամգիթ Տէր Պետրոսեանիմ" վերմագրով յօդուածիմ առիթով: Նամակը յամմ-ուեցաւ ամծամբ, որմէ ետք Առաջնորդ Սրբազանները տեսակցութիւն եւ գրոյց ունեցան օրաթերթի խմբագիր՝ Օրլանտօ Պարոմէի հետ, Հայաստանի եւ Հայ Եկեղեցւոյ մերկայի մասիմ:

Հրատարակութեան կու տամք պատրաստուած երեք փաստաթուղթերը:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀԱՂՈՐՅԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխարհի մերկայ կացութեան մէջ, ուրիշ ժողովուրդներում կարգիմ Հայութիւնն ալ կը ձգտի իրագործելու իր ազգայիմ իտէւլներն ու երազները: Եւ հակառակ դժուարութեանց, մեր Հայրենիքը Սեպտ. 23-իմ պաշտօնապէս հռչակեց իր Անկախութիւնը եւ Հոկտեմբեր 16-իմ ըմտրեց իր առաջիմ Նախագահը՝ յամծիմ Լեւոն Տէր Պետրոսեանի: Բնական եւ սակայն տարիներ առաջ ամերեակայելի իրականութիւններն ասոնք, որոնք մեզմէ կը պահաւնջեն զգաստութիւն եւ միասնական կեդրոնացած աշխատամք Հայրենիքի սիրոյմ ու բարեւաւման համար:

Դժբախտաբար սակայն. . . Ազգայիմ Անկախութեան ուրախառիթ եւ մտահոգիչ այս օրերում ակամջալուր ու ակամատես կ'ըլլանք (թէ՛ Հայրենիքի եւ թէ՛ Սփիւռքի մեր Գաղութ-ներն մերս) ամտեղի եւ ժամանակավրէպ երեւոյթներում, որոնք կը յայտնուիմ Հայ Կաթողիկէ Հոռմէադաւան կարգ մը պատասխամատու եկեղեցականներում կողմէ, Հայ ժողովուրդի տազմապալի օրերում, մպաստաւոր առիթ մը օգտագործելու ամապարամքիմ մէջ, կրկնելով իրենց մաշած ու փոշոտած մարդորսութեան մոյմ յամկերգը:

Արդարեւ, սրտի խոր ցաւով վերահասու եղամք Հայ Կաթողիկէ եկեղեցականներն Յարութիւն Ծ. Վրդ. Թէրեւեանի յօդուածիմ, լոյս տեսած "Պուէթիմ" Յուլիս 1991 թիւ 38, Սպաներեմ գրուած, իսկ Հայրենիք՝ Յունիս: Մոմթէվիտօ հրատարա կուած պաշտօնա-թերթիկի էջերում մէջ, որը ոչ այլ իմչ է, քան կրկնութիւնը արդէն իսկ բազմիցս փաստացիօրեմ հերքուած տեսակէտներում, որով ժամանակիմ որոշ Հոռմէադաւան կղերականներ փործած են արդարացնել իրենց բաժնուումը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիէմ եւ այսպէտով շահիլ Վատիկանի համակրամքը:

Մենք շատ լաւ գիտենք, որ մոյմիմքն Հոռմէական Կաթողիկէ եկեղեցւոյ կեդրոնը, յաւկապաւս իր վերջիմ շրջանի պաշտօնական արտայայտութիւններում մէջ, բոլորովիմ դէմ է վշտացնելու քոյր եկեղեցիներէմ որեւէ մէկը. իսկ Հայաստանեայց Առաքելական Եկե-

դեցւոյ հետ ալ կապուած է Քրիստոնէական սիրոյ զգացումներով եւ յարգանքով: Այս պարագան դրսեւորուեցաւ մասնաւորաբար Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամեմայն Հայոց Կաթողիկոսի եւ Հոռմեական Կաթողիկէ Եկեղեցւոյ պետիմ՝ Նորին Սրբութիւն Պօղոս Զ. Պապի, եղբայրական ողջագոյրմամբ:

Հետեւաբար, մեզի համար բոլորովին անհասկնալի է եւ խիստ ծամամկալելի, որ այս օրերուն, երբ յատկապէս պատմական քոյր եկեղեցիներու միջեւ փոխադարձ սէր ու յարգանք կը տիրէ, երբ էքումէնիք ոգիւ եւ իրարհասկացողութեամբ եւ համդուրժողականութեամբ զգացումները խանգարուողութեամբ կը յայտնուին ամենուրեք, եւ երբ մեր ազգւոյ պատմական կրօնական ու ազգային վերագարթօնքի օրեր՝ գտնուին Հայագգի մարդիկ, թէկուզ եւ այլադաւան, որոնք փորձեն մտնացնել պատկերը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եւ անոր Աստուածահիմն կեդրոն Ս. Էջմիածնիմ, դատապարտելով անոր կրօնական եւ ազգային անկախ դիմագիծը, որ երբեք անյարիր չէ եւ չի կրնար ըլլալ մեր Տիրոջ եւ Առաքելութեան միջոցաւ քարոզուած վարդապետութեամբ հետ:

Խիստ ցաւալի է մաեւ այն պարագան, որ վերոյիշեալ յօդուածիմ հեղինակը մամշուած է իրեւ ազգային զգացում ունեցող Հայ Կաթողիկէ Եկեղեցականներէմ միմ. ի տարբերութիւն իր Առաջնորդիմ՝ Եպիսկոպոս Վալտիր Պօղոսեանիմ՝ որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կուսակրօն եկեղեցականաց յատուկ սրածայր վեղարը գլուխը դրած, մեր եպիսկոպոսներու կողմէ գործածուող պամակէմ իւրացուցած, ու Ասան ձեռքը բռնած, կը շրջի Հարաւայիմ Ամերիկայի Հայկական գաղութները իմքգիմք հարկ եղած ծամամկ Հայաստանեայց Եկեղեցւոյ եպիսկոպոս մերկայացնելով. . .: Յարութիւն Ծ. Վրդ. Թէրեւեմ լաւ կ'ըլլար որ խմայէր իմքգիմքիմ, ու իր կեանքի մայրամուտիմ համդէս չգար մմամ յօդուածով մը:

Կը յուսամք, որ վերոյիշեալ յօդուածը վերջիմք ըլլայ մեր Եկեղեցւոյ դէմ գրուած այն յերիւրածոյ ու շինծու աշխատանքներում, որոնք տեղը միշտ դուրս կը մմայ մշմարիտ պատմութեամբ ըմքացքէմ եւ ողջախոհ մարդոց սրտներէմ:

ՏԱԹԵԻ ԵՊՍ. ՂԱՐԻՊԵԱՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ՊՐԱԶԻԼԻ ՀԱՅՈՅ
ԳԻՍԱԿ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՅՈՅ
ՅԱԿՈԲ ԵՊՍ. ԳԼՆՃԵԱՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ՈՒՐՈՒԿՈՒԱՅԻ ՀԱՅՈՅ